Յուղաբեր ՅԱՓՈՒՆՋՅԱՆ
Աշխեն ՍՈՒՎԱՐՅԱՆ

ՀՀ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ

Վերջին տասնամյակում ՀՀ հասարակական կյանքի բոլոր բնագավառներում թե՛ տնտեսական, թե՛ սոցիալական, թե՛ մշակութային, տեղի ունեցան արմատական լուրջ փոփոխություններ, որոնց շնորհիվ ազատ շուկայական տնտեսության անցման գործընթացը դարձավ անշրջելի: Սակայն ինչպես անցման շրջանի բոլոր երկրներում, այնպես էլ Հայաստանում, այդ գործընթացները ուղեկցվեցին որոշակի անխուսափելի հիմնախնդիրների առաջացմամբ, որոնք էլ իրենց կնիքը թողեցին անցումային գործընթացի ուղղվածության, ոճի և արագության վրա:

Այս պայմաններում Հայաստանի Հանրապետությունը սկսեց իրականացնել տնտեսական բարեփոխումներ, որոնք նպաստակառուղղված էին ազատ տնտեսական հարաբերությունների արմատավորմանը և շուկայական գործընթացների անշրջելիությանը՝ դրանով իսկ ապահովելով հանրապետության տնտեսական անկախությունը:

Այդպիսի անհրաժեշտ բարեփոխումներից մեկն էլ ապահովագրության ներդրումն էր Հայաստանի տնտեսության մեջ: Ապահովագրությունը հասարակության տնտեսական օրգանիզմի ֆունկցիոնալ կարևոր օղակ է, քանի որ այն թափանցում է ամենուրեք՝ տրանսպորտ, բեռնափոխադրումներ, ֆինանսներ և անշարժ գույքի շուկա, առևտուր և այլն: Ապահովագրությունը առաջին հերթին տնտեսական կատեգորիա է, բայց և միևնույն ժամանակ այն սոցիալական գործունեություն է, գործունեություն՝ ի պաշտպանություն և՛ հասարակության, և՛ պետության, և՛ միջազգային համագործակցության: Ապահովագրության մեխանիզմները ձևավորվել են մի քանի դար շարունակ՝ շատ ժողովուրդների և երկրների կողմից: Հայ իրականության մեջ ապահովագրությունը, որպես հասկացություն նորություն չէր, քանզի դեռևս Խորհրդային Միության ժամանակ գոյություն է ունեցել «ապահովագրություն» ասվածը: Հայաստանում գործում էր ապահովագրության մի պարզ համակարգ, պարզապես այն որոշ ժամանակահատվածում փոխ ետ գցելու միջոց էր: Ապահովագրության բուն ձևերը՝ առողջությունը կամ գույքը ապահովագրելու ձևերը, կային միայն ձևականորեն, սակայն գործնականում համարյա անհնար էր դժբախտ պատահարների կամ տարերային աղետների դեպքում ստանալ պայմանագրով նախատեսված գումարները:

Ապահովագրական գործունեության իրականացման համար անհրաժեշտ է զգալի կապիտալ, քանի որ ապահովագրական ընկերությունը ստանձնում է ուրիշների ռիսկը: Նման կապիտալի բացակայությունը միշտ զգացվում էր, ինչի հետևանքով լուրջ պրոբլեմներ էին առաջանում հայկական շատ բանկերի, առավել ևս ապահովագրական ընկերությունների գործունեության մեջ:

ՀՀ ապահովագրական համակարգի զարգացման սկզբնական փուլում ապահովագրական ընկերությունների ստեղծման գործընթացը և նրանց գործունեությունը բնութագրվում է տարերայնությամբ, պետության կողմից այդ գործունեության նկատմամբ կարգավորման և վերահսկողության անկատարությամբ: 1991-1996թթ. տեղի ունեցավ ՀՀ ապահովագրական շուկայում գործող ապահովագրական ընկերությունների ընդհանուր թվաքանակի կտրուկ աճ: Այդ ժամանակաշրջանում Հայաստանում գործում էր 82 ապահովագրական ընկերություն: Մտահոգությունների տեղիք էր տալիս հատկապես ապահովագրական ընկերությունների լիցենզավորման գործընթացը, որը որոշ չափով սկսեց կանոնակարգվել միայն 1993թ.-ից՝ «ՀՀ տարածքում ապահովագրական գործունեությամբ զբաղվելու ժամանակավոր կարգով» հաստատված ՀՀ ֆինանսների նախարարի 1993թ. ապրիլի 12-ի թիվ 28 հրամանով:

1996թ. հունիսին ապահովագրության ոլորտում կուտակված հիմնախնդիրները լուծելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարությունում ստեղծվեց առանձին կառուցվածքային ստորաբաժանում՝ ապահովագրության տեսչություն: Այն բանից հետո, երբ ՀՀ նախագահի կողմից 1996թ. նոյեմբերի 19-ին վավերացվեց «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքը, իսկ նույն թվականի նոյեմբերի 29-ին ընդունվեց այդ օրենքից

բխող «ՀՀ տարածքում գործող ապահովագրական կազմակերպությունների գործունեությունը կարգավորելու մասին» ՀՀ կառավարության թիվ 368 որոշումը, հանրապետությունում դրվեցին ապահովագրական գործի ապամենաշնորհման իրավական դաշտի առաջին հիմնաքարերը: Սկսեց ձևավորվել պետության կողմից կարգավորվող ապահովագրական շուկա:

Շնորհիվ ապահովագրության օրենսդրության գործողության՝ Հայաստանի ապահովագրական շուկայում ձևավորվեց հետևյալ իրավիճակը. 1. Հավասարվեցին ապահովագրական շուկայի սուբյեկտների իրավունքները, այսինքն՝ օրենսդրությունը առաջարկեց հավասար պայմաններ նրանց ձևավորման, գործունեության և զարգացման համար: 2. Ապահովագրական գործը ապամենաշնորհվեց: 3. Օրենսդրորեն կարգավորվեց ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունության ապահովումը: 4. Կատարվեց ապահովագրական ընկերությունների և ապահովագրական բրոքերների լիցենզավորում և գրանցում: 5. Իրականացվեց ապահովագրական գործունեության նկատմամբ պետական վերահսկողության սահմանում և պետական կառավարման մարմնի ստեղծում, այլ կերպ ասած, ապահովագրական շուկայի կարգավորում: 6.Կատարվեց ապահովագրական,վերաապահովագրական և ֆինանսատնտեսական գործունեության տարեկան աուդիտի անցկացում և նրանց հաշվետվության, ապահովագրական գործարքների հաշվառման ձևերի ու ցուցանիշների սահմանում: 7. Հայաստանի ապահովագրական շուկան բացվեց արտերկրյա կապիտալի առջև: 8. Ապահովագրական սուբյեկտներին թույլատրվեց ազատ ընտրություն կատարել ապահովագրողների, բրոքերների,վերաապահովագրողների միջև: Նշված իրադարձությունների արդյունքում ձևավորվեց իրավական դաշտ ապահովագրական ընկերությունների գործունեության համար:

Օրենքը, անշուշտ, կատարյալ չէ: Դա թերևս պայմանավորված է ժամանակի գործոնով: Հնարավոր չէ միանգամից մշակել կատարյալ օրենսդրություն, որովհետև դա երկարատև գործընթաց է: Իրավական դաշտը պետք է զարգանա և արդիականացվի երկրի տնտեսական զարգացմանը համընթաց:

Ապահովագրական ընկերությունների ֆինանսական կայունության և վճարունակության ապահովման, ինչպես նաև նրանց գործունեության նկատմամբ պետական վերահսկողության իրականացման նպատակով վերոնշյալ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի ընդունման արդյունքում սկսեց արագորեն կրճատվել գործող ապահովագրական ընկերությունների քանակը: Եթե մինչև օրենքի ընդունումը գործում էին 82 ապահովագրական ընկերություններ, ապա օրենքի ընդունումից հետո գործունեության ուղեգիր ստացան միայն տասը, որոնք իրենց տվյալներով համապատասխանում էին օրենքի պահանջներին:

2002թ.-ի հուլիսի 1-ի դրությամբ ՀՀ տարածքում գործում էր 23 ապահովագրական ընկերություն,[1] այդ թվում՝ 11 ՍՊԸ, 13 ՓԲԸ, 1 ԲԲԸ և 5 ապահովագրական բրոքեր, այդ թվում՝ 3 ՍՊԸ, 2 անհատ ձեռներեց, իսկ 2001թ.-ի սեպտեմբերի 30-ին դրանց թիվը արդեն 27 էր: Ընդ որում, 01.07.1999թ.-ից 01.07.2000թվականն ընկած ժամանակահատվածում ապահովագրական լիցենզիա են ստացել 7 ընկերություն, ուժը կորցրած է ճանաչվել 5 ընկերության լիցենզիա: Ապահովագրական ընկերություններից միայն մեկն ունի կյանքի ապահովագրության իրականացման լիցենզիա:

«Ապահովագրության մասին» ՀՀ օրենքը 1997թ. ապրիլի 1-ի դրությամբ սահմանել է ապահովագրական ընկերությունների նվազագույն կանոնադրական կապիտալ՝ 20 մլն. դրամի չափով: Միաժամանակ օրենքը իրավունք է վերապահում լիազորված կառավարման պետական մարմնին՝ հանձին ապահովագրության տեսչության, բարձրացնել կանոնադրական կապիտալի չափը իր կողմից սահմանված կարգով ոչ ավել, քան տարին մեկ անգամ կամ էլ մի քանի տարվա համար նախապես հաստատված գրաֆիկով: 1997թ.-ի ապրիլի 1-ից հետո 2 անգամ բարձրացվել է ապահովագրական ընկերությունների կանոնադրական կապիտալի նվազագույն չափը. նախ՝ 30 հա-

---

[1] *Հայաստանի վիճակագրական տեղեկագիր-Statistcal Yearook of Armenia – Статистический ежегодник Армении, Ер., 2003:*

գար, ապա՝ 5 հազար, 2003թ. հունվարի 1-ից՝ 150.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, իսկ 2004թ. հունվարի 1-ից՝ 200.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

2000թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ ՀՀ-ում գրանցված ապահովագրական ընկերությունների համալրված կանոնադրական կապիտալը կազմել է 1419784.0 հազար դրամ, իսկ սեփական կապիտալի հանրագումարը՝ 1857963.0 հազար դրամ: 2001թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ դրանք համապատասխանաբար կազմել են 2141648.0 և 2759885.0 հազար դրամ: 2000թ.-ի համեմատ ապահովագրական ընկերությունների կանոնադրական կապիտալն աճել է 50.8 տոկոսով, իսկ սեփական կապիտալը՝ 48.5 տոկոսով: Եթե առ 01.10.2000թ. ապահովագրական ընկերությունների գործունեության ֆինանսական արդյունքը եղել է վնասով՝ 187559.0 հազար դրամ, ապա առ 01.10 2001թ. ապահովագրական ընկերությունները ապահովել են շահույթ 390792.0 հազար դրամի չափով: Կանոնադրական կապիտալին բաժին էր ընկնում սեփական կապիտալի 77.6 տոկոսը, իսկ շահույթին՝ համապատասխանաբար 14.2 տոկոսը:

Ապահովագրական ընկերությունների թույլ տեխնիկական հագեցվածության և շենքային անբավարար պայմաններում նյութական ակտիվների տեսակարար կշիռը ընդհանուր ակտիվներում կազմում էր 23.3 տոկոս: 2000թ. համեմատությամբ 2001թ.-ին ապահովագրական ընկերությունների ակտիվներն աճել են 16.5 տոկոսով, իսկ ֆինանսական ներդրումները նվազել են ակտիվների ընդհանուր թվում 9.4 տոկոսով: 2001թ.-ին տեղի է ունեցել նախորդ տարվա համեմատությամբ պարտավորությունների նվազում 49.2 տոկոսով:

Ապահովագրական ընկերությունների կողմից իրականացված հատուցումները կազմել են 2000թ.-ի հոկտեմբերի դրությամբ 2773070 հազար դրամ, իսկ 2001թ.-ին՝ 499280 հազար դրամ:

1999թ.-ի տվյալներով, հավաքագրված յուրաքանչյուր 100 դրամ ապահովագրավճարին բաժին է ընկնում 4.7 դրամ ապահովագրական հատուցում: Սա շատ ցածր ցուցանիշ է հայկական ապահովագրական շուկայի համար, որը գտնվում է դեռևս իր զարգացման սկզբնական փուլում: Միջազգային չափանիշներով՝ այդ ցուցանիշների մեծությունը պետք է տատանվի 60-100 տոկոսի միջև: ՀՀ-ում ապահովագրական հատուցումների մակարդակի խիստ ցածր լինելը պայմանավորված է մի շարք պատճառներով. 1.Ներկայիս համակարգին բնորոշ հատուցումների դինամիկան ունի ուժեղ տատանողական բնույթ: 2. Ըստ ստանձնած պարտավորությունների, ապահովագրական գումարները, ելնելով պահանջարկից, հաճախ քանակապես մեծ չեն: 3. Ապահովագրական պատահարները կարող են ծագել ապահովագրի կամ երրորդ անձանց մեղքով: Այս դեպքում առաջանում է ետպահանջի իրավունք ապահովագրվողի կամ այլ անձի նկատմամբ, և նման դեպքերում հատուցում ստացող կողմը ձեռնպահ է մնում այդ պահանջի իրավունքից և այլն: Բացի այդ, ապահովագրողների կողմից ձևավորված են որոշակի ապահովագրական պարտավորություններին համարժեք ապահովագրական պահուստներ, որոնք գործող պարտավորությունների գծով ապահովագրական պատահարների ի հայտ գալու դեպքում ունեն որոշակի ծածկույթ:

ՀՀ-ում ապահովագրողների կողմից հիմնականում իրականացվում են ապահովագրության հետևյալ տեսակները դժբախտ դեպքերից, բեռների, բժշկական, ֆիզիկական և իրավաբանական անձանց գույքի, փոխադրամիջոցների, երրորդ անձանց հանդեպ փոխադրամիջոցների սեփականատերերի պատասխանատվության, ավիացիոն ռիսկերի, շինմոնտաժային աշխատանքների հետ կապված ռիսկերի, շինարարների մասնագիտական պատասխանատվության, գրավի և ֆինանսական ռիսկերի ապահովագրություններ:

Ապահովագրվողների կողմից հիմնական ակտիվությունը ցուցաբերվում է բեռների, գույքի և արտասահման մեկնողների, դժբախտ պատահարներից ապահովագրության ոլորտներում: Ապահովագրության վերոնշյալ տեսակներից ՀՀ-ում ներկայումս առավել լուրջ քննարկումների առարկա է դարձել բժշկական ապահովագրությունը, որ հանդիսանում է անձանց և նրանց ընտանիքների անդամների հիվանդության դեպքում մատուցված բժշկական օգնության և սպասարկման հետ կապված ծախսերի ապահովագրական հատուցման կարևոր համակարգ:

Հատկանշական է այն, որ արտասահմանյան ապահովագրական ընկերությունները բավականին մեծ հետաքրքրություն են ցուցաբերում Հայաստանի ապահովագրական շուկայի նկատմամբ: Հայաստանը հանդիսանում է զգալի ռիսկի տարածք երկրաշարժերի, բնական աղետների առումով: Հաշվի առնելով երկրի տնտեսության զարգացման դեռևս թույլ մակարդակը և ազգային ապահովագրական ընկերությունների և գործակալությունների ձեռքում զգալի կապիտալների, միջոցների կենտրոնացման հնարավորության բացակայությունը՝ տեղական ապահովագրական ընկերությունների մոտ շահագրգռվածություն է առաջանում համագործակցելու խոշոր արտասահմանյան գործընկերների հետ՝ վերաապահովագրության նկատառումներով: Սրանով մի կողմից ապահովագրական ընկերությունները, չկարողանալով իրենց կանոնադրական կապիտալով ապահովագրել մեծ ռիսկեր, հենվում են արտասահմանյան ընկերությունների վրա իբրև անհրաժեշտություն: Մյուս կողմից՝ խելամտորեն օգտագործելով արտասահմանյան ընկերությունների մրցակցությունը, կարելի է զարգացնել տեղական ապահովագրական ընկերությունները, բարձրացնել ապահովագրական շուկայի մասնակիցների մասնագիտական պատրաստվածությունն ու կուլտուրան:

Հաշվի առնելով ՀՀ արդի տնտեսական վիճակը, իրավական դաշտի անկատարությունը և ապահովագրական ընկերությունների կապիտալիզացման մակարդակը՝ կարծում ենք, որ ՀՀ ապահովագրական համակարգի հետագա զարգացումը պետք է ուղեկցվի մի շարք անհրաժեշտ քայլերի իրականացմամբ: Նկատի ունենք՝ ա. ՀՀ ապահովագրական շուկայի ռազմավարական զարգացման կոնկրետ ծրագրի մշակումը, բ. Օրենսդրական և նորմատիվ ակտերի ընդունման հատուկ ընթացակարգի սահմանումը, գ. Ապահովագրության զարգացման պետական կարգավորման և աջակցման համակարգի մշակումը, դ. «Պարտադիր ապահովագրության մասին» օրենքի ընդունումը, ե. Կյանքի ապահովագրության տեսակետների ներդրման ապահովումը, զ. Բանկային, ֆինանսական, ներդրումային, գյուղատնտեսական և մեծ ռիսկերի կառավարման համակարգերի և նրանց ապահովագրության ու վերաապահովվագրության մեխանիզմների մշակումը:

Ելնելով ՀՀ ներկա սոցիալ տնտեսական պայմաններից՝ կարևորվում է հատկապես գյուղատնտեսական և բանկային համակարգերի ապահովագրության անհրաժեշտությունը: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ գյուղատնտեսությունը, որպես տնտեսության ռազմավարական կարևոր հատված, միաժամանակ նաև բարձր ռիսկայնության ոլորտ է, ինչը պայմանավորված է բնական աղետների անկանխատեսելիությամբ և դրանց ընթացքը կանխելու անհնարինությամբ: Հաշվարկները ցույց են տալիս, որ հանրապետությունում պարբերաբար կրկնվող բնական աղետների հետևանքով՝ ցրտահարություններ, կարկտահարություններ, ջրհեղեղներ, քամիներ, երաշտ և այլն, յուրաքանչյուր տարի ոչնչանում է գյուղատնտեսական արտադրանքի շուրջ 10-15 տոկոսը: Աղետի հետևանքով տուժած գյուղացիական տնտեսությունները, անհատ գյուղացիները զրկվում են արտադրության վրա կատարված ծախսերի վերականգնման, հետևաբար արտադրության հաջորդ փուլի համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներ ստեղծելու հնարավորությունից, ինչը խաթարում է վերարտադրության բնականոն գործընթացը:

Ստեղծված իրավիճակում գյուղատնտեսության բնագավառում ապահովագրական համակարգի ներդրումը պետության առաջնային հիմնախնդիրներից մեկն է: Համակարգի ներդրման կարևորությունը թելադրված է թե՛ երկրի սննդապահովվածության անվտանգության, թե՝ գյուղացիների սոցիալական պաշտպանվածության ապահովման խնդիրների իրատեսական լուծումներով:

20-րդ դարի ընթացքում բազմաթիվ պետություններ բախվել են բանկային համակարգերի ճգնաժամերի, որոնց հիմնական պատճառ են դարձել շատ երկրներում բանկային ավանդների պարտադիր ապահովագրության համակարգերի բացակայությունը կամ ներդրման թերացումները: Ուստի, հաշվի առնելով ՀՀ–ում արդեն ձևավորված բանկային համակարգի առանձնահատկությունները, բանկերում ապահովագրության համակարգի ներդրմանն ուղղված քայլերի հիմնավորված կիրառությամբ հնարավոր է ստեղծել այսօր հույժ կարևոր և արդյունավետ գործող մի համակարգ: Ընդ որում, վերոնշյալ բարեփոխումները անհրաժեշտ է իրականացնել պետության անմի-

ջական մասնակցությամբ՝ դրանց արդյունավետությունը և միասնությունը ապահովելու նպատակով:

Այսպիսով, կարող ենք ասել, որ ապահովագրական համակարգի օբյեկտիվ զարգացումը համապատասխանում է ՀՀ երկարաժամկետ շահերին, չնայած այն բանին, որ հասարակության լայն շերտերը դեռևս վստահություն չունեն այս համակարգի լիարժեք գործունեության նկատմամբ:

СИСТЕМА СТРАХОВАНИЯ В АРМЕНИИ

Резюме — *Ю. Япуджян, А. Суварян*

Переход к рыночным отношениям предполагает осуществление ряда реформ в РА. Одной из таких необходимых реформ является внедрение полиса страхования в экономике Армении. В настоящее время Армения уже сделала свои первые уверенные шаги в области страхования: создано законодательное поле для международного сотрудничества, действуют лицензированные страховые компании. Начиная с 10 апреля 1997 г. стало возможным упорядочить рынок страхования и ввести его в цивилизованное русло. Закон, несомненно, не совершенен. Однако это обусловлено фактором времени. Невозможно сразу разработать совершенное законодательство.Юридическое поле должно развиваться и модернизироваться параллельно экономическому развитию страны.